

«Անվրդով արդարութիւնը», «Անդգալութեան ժանտախտը», «Ասպետականութեան մահադանգակը» և այլն:

Որպէս զի մեր խօսքը չերկարի և ընթերցողն աւելի սլարդ դադափար կազմի թարգմանութեան անճոռնիութեան մասին, առաջ ենք բերում հէնց առաջին տեղը դրուած բանաստեղծութիւնը.

Թուրքը Հայաստանի մէջ

Էի՛նչ օգուտ, ո՞վ Անդլիա, ժողովքի մէջ տիրելէդ,
Մարտավարի և նոյնպէս շահաստանի ծրուելէդ
Ուկրանոսի վրայ նաւեր. և նորոգել տուրքերով
— Ըստացուած ոսկեքեր իւրաքանչիւր երթուկէդ—
Դանձարաններդ, թէ լսել կարող չես լացկոծ
Նահատակուած կիներու խուժանէն ճերմակ-փաթթոց,
Ամենամեծ դուրս որուն սուրն էր որով մորթեց ան
Եւ ձեռքդ չես վերցնէր շարժել մաքրիչ դաւադան:
— Անկէց պաշտօն ունէիր կը կարծէինք հնուց վեր,
Որ սերոքք շուրջ պատեալ դիտեց ու կը դիտէ դեռ—
Հարսածելու չարագործն քեզ վիճակուած մականով.
Իր նըշանին կը սպասես. անլսելի սրտխորով
Բաւ լաց կուս հողիներու՝ վրէժի համար, և վերն ալ՝
Բաւ պըստում բարդիւբարդ սև լոնքերուն Բարձրեալ,
Ներողութիւն, ընթերցող, այս «բարդիւբարդ պըստ-
տում»-ի համար:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ. Էմմա, վէպ ժամանակակից քաղ-
քերից. 1901 Թիֆլիս.

Մեր երիտասարդ վիպագիրների, կամ աւելի ճիշտ վիպա-
կան պատկերներ գրողների մէջ որոշ տեղ է բռնում Վ. Փա-
փաջեանը, որի գրութեանց տասնեակ տարի է արդէն լուս
են տեսնում մեր պարբերական թերթերում, ժողովածուների
մէջ և առանձին գրքուկներով: Այդ գրութեանցից մի քանիսը
թէև գեղարուեստի կողմից թույլ են, սակայն իրական կեանքի
ճշգրիտ պատկերն են ներկայացնում. այդ տեսակիցն է և
հեղինակի նորագոյն աշխատութիւնը, Էմման, որի I մասում
պ. Փափաջեանը լուսանկարչական ճշտութեամբ նկարագրում
է Զուլիցերական հալ ուսանողական կեանքն ու բարքերը: Այս
գրութեան մէջ բուն վիպական մասն իսկապէս շատ թույլ է
և ընթերցողին այնքան էլ չէ հետաքրքրում, թէև արժար-

ծուած գաղափարները համակրելի են. վիպական ոչինչ չկալ նա մանաւանդ գրքի երկրորդ և երրորդ մասերում:

Գրուածքի գլխաւոր հերոսն է Լմամն, Նորվիգացի մի հարուստ օրիորդ, որ ծանօթանալով հալ ուսանող Սուրէնեանի հետ, համակրում է նրան, հետաքրքրում հալերով (օգուտ հալերի գործելու տենչանք ունենում, սովորում է հալերէն և վերջը գալիս է Կովկաս, պսակւում է Անիում Սուրէնեանի հետ և ապա երկուսը միասին գնում են Պարսկաստան՝ գործելու Էմման մի ջղալին և տարօրինակ աղջիկ է. նա ուղում է գործել, մեծ բաների է ձգտում և արհամարհում է չղատարի, «անպէտք», «աննպատակ կեանքը». նա ասում է. «Ոգեորում եմ լաճախ և շատ լաճախ, երբ մտածում եմ որ սիւտի գործ եմ. գործեմ, մտածեմ մի մեծ նպատակի համար, աշխատեմ...» Նա նոյնը պահանջում է և իր նշանածից, Սուրէնեանից:

Սուրէնեանն էլ ունի լաւ մտքեր, ձգտումներ, գործելու ծրագիրներ, բայց բնաւորութեամբ թույլ ու անհաստատ է, չունի կամքի ուժ, առանց ուրիշի դրդման չի կարող գործել և միմիայն դրագէտ ուսանող Վուլկանի և Էմմալի պահանջներին շնորհիւ նա հաստատուն որոշումներ է անում՝ հալերենիք վերադառնալու և գործելու:

Ուսանող հալերի և հալուհիներին տիպերը մեծ մասամբ ճիշտ և բնական են նկարագրուած. ուսանողական մի ժողովի պատկերը միայն չափազանցութեան է հասցրած. ալքքան վարենութիւն սպասելի չէ հալ ուսանողներին, որքան էլ նրանք դրգուած և կուսակցական միտումներով տոգորուած լինէին:

Երբ Սուրէնեանը ուսումնաւարտելուց լքող Կովկաս է գալիս, գործունէութեան ծրագիր մշակելու, պարտք է համարում ալցելել Թիֆլիսի բոլոր հալ խմբագրութիւնները և ծանօթանալ խմբագիրների ու աշխատակիցների հետ. ահա ալք առկթով փափաղեանը իրական ճշտութեամբ նկարագրում է մեր համարենս բոլոր մեծապատիւ խմբագիրներին ու նրանց աշխատակիցներին գործունէութեան ու մտածման եղանակը. երևում է, որ հեղինակն անձամբ մօտ տեղեակ է եղել խմբագրատների ներքին կեանքին:

«Էմման» կարգացում է հետաքրքրութեամբ, թէև ինչպէս ասացինք, վիպականը թույլ է. հետաքրքրական է, որովհետև ժամանակակից կեանքի որոշ և պարզ պատկերներն են նկարելու ընթերցողի աչքի առաջ: Պ. Փափաղեանի լեզուն

կով ու սահուն է, միայն նա սիրում է շատ խիստ կամ «թունդ» բառեր գործածել, երբեմն էլ անտեղի. օրինակ նա շատ է կրկնում «սոսկալի» և «ալլանդակ» խօսքերը. «սոսկալի զառիվալրո—խօսքը քաղաքի մի փոքրիկ մասին է»,— «սոսկալի երաժիշտ», «սոսկալի հեղինակ», «սոսկալի երաժշտութիւն», «սոսկալի օրիորդ», «կեանքը սոսկալի», «Ալլանդակութեան շնորհիւ», «ալլանդակ, բաց լսեմ», «երազները ալլանդակ», «ալլանդակ, արտակենդրոն եմ թւել ձեզ», «ալլանդակապէս անդգոյշ», «ալլանդակ հալեացքով», «ալլանդակապէս բարձր», «լծոց ուրտ» չլալն ժպիտ», «ծորոզ ձալն», «դառն, բաց համակրելի գծագրութեամբ տիկին», «արի ներս, ինչ ես դռան վրա կանգնեցի», «սօսկով ուսանողական երեկոյթի տոմսակների մասին, հեղինակն ուզում է ասել, որ ռուս ուսանողուհիները շատ տոմսակ են ծախել և այդ միտքն արտաբերում է հետեւեալ ոչ գեղարուեստական դարձուածքով. «ռուս ուսանողուհիները բաւական շատ բաց են թողել» և այլն. Սրանք գուցէ մանր բաներ են, բաց մեր մէջ վիպական բնաւորութիւն ունեցող գրուածքները համեմատաբար աւելի շատ են տարածւում և կարդացւում, այդ պատճառով և վիպագիրներն ամեն կերպ պէտք է աշխատեն, որ մաքուր ոճ և պարզ ու ճիշտ բառեր գործածեն:

Հալերի մտաւոր կեանքով հետաքրքրուողներին խորհուրդ ենք տալիս կարդալ «Էմման»:

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂՆԱՆ. Առողջ ու հիւանդ սրբխայի որդին. 1902 Ս. Պետ.

Մեծ եռանդով աշխատող բժիշկ Բուդուղեանի գրուածքները գիտական—ժողովրդական երկերի մի ամբողջ մասեանադարան են կազմում. Հալ ժողովուրդը ցալով շատ քիչ նիւթ ունէր այդ ուղղութեամբ մշակուած և մալրենի լեզուով հրատարակուած. Բուդուղեանի աշխատանքները շատ օգտակար կարող են լինել տարրական կրթութիւն ստացած չափահասների համար, որոնք ոչ միջոց և ոչ էլ կարողութիւն ունին այդ խնդիրներին վերաբերեալ ընդարձակ հետազոտութիւններ